

ՈՍԿԻ ՀԱՏԻԿՆԵՐ

հանդիսանար՝ ստեղծագործութեան չքնադահրաշ բանաստեղծութեանը:

Ստուգիւ Ֆալըի գրչին տակ՝ կենդանաց բնագոյին սքանչելիքը, միջատներու ոգեբանութիւնը՝ գիտական տեսութիւններով և մարգարէական գուշակութիւններով համեմուած՝ իրական դիւցազնեղբօնութեան մը բնադրոջը կը զգենուն:

Այնքան նշանաւոր դարձած էր, որ քանի մը տարի առաջ՝ Ֆրանսայի պետութիւնը, յորելիան կատարել տալով՝ հանդիսաւորապէս իրեն համար յիշատակարան մը կանգնել տուաւ, իբրև արդի ժամանակներու ամենէն աւելի բարձր հանճարը:

Վրան սքանչացող զանազան մեծ գիտնականներ հետաքրքրութեամբ հարցոցին.

— Կը հաւատանս Աստուծոյ գոյութեան, և ինչպէս:

Հաստատակամ շեշտով, պատասխանեց.

— « Ես, չեմ կարող ըսել թէ կը հաստատւի Աստուծոյ, վասն զի ես գիտտուած կը տեսնեմ: Առանց Աստուծոյ ներկայութեան ամենայն ինչ խաւար է:

« Մանկութենէս սկսեալ՝ ո՛չ միայն իմ այս համոզումս հաստատուն պահեցի, այլ նաև մինչև այս տարիքս՝ որքան աւելի ուսումնական հետազոտութիւններու մէջ յառաջեցի՝ այնքան աւելի խորապէս ըմբռնեցի և մեծապէս բարւոքեցի իմ մէջս՝ Աստուծոյ ակնյայտնի գոյութեան իրականութիւնը:

« Ամէն զոր ունեցած է իւր արտաոց գաղափարները, և մեր ժամանակներու հիւանդութիւնն է՝ սնաստուածութիւնը:

« Ինձ համար աւելի դիւրին պիտի ըլլայ մորթի հանել տալ՝ քան թէ մտքէս Աստուծոյ վրայ ունեցած գիտակցութիւնս:»

Արդարև այս պարզ արտայայտութիւնը վսեմ դաս մ'է այն կարծեցեալ ուսումնականներու համար՝ որոնք բացարձակ ժխտելով Աստուծոյ գոյութիւնը՝ Գրական Գիտութեան նշանադրոջը ազատագրած կը համարին:

1. — Կ'ուզես խաղաղութիւն՝ խղճիդ և Աստուծոյ հետ:

— Ինչ կ'ընես. հարցնողաց՝ ճշմարտութեամբ պատասխանէ՛.

« Կ'աշխատիմ. ազգիս բարիք կը զործեմ. կը ջանամ բարի ըլլալ. կը համրեմ. կ'արօթեմ »:

2. — Կ'ուզես նշանաւոր անձ մ'ըլլալ:

— Սիրէ՛ հետեւեալ առաքինութիւնները գործադրել.

Կարգաւորութիւն. Հատարի հոգի. կիրքերու մեղսցում. Հաստատականութիւն:

3. — Գիտցի՛ր. երկու անզուգական առաքինութիւններ են՝ ըլլալ Արդար և Բարի. բայց մարդս նախընտրելու է Բարութիւնը՝ Արդարութիւնէն:

4. — Համոզուէ՛. Արիստիքոս և առաքինի անձերու նշանացոյցներն են.

Ընկերական ո՛ր և է Գործի՛ սիրայօժար եռանդով ձեռք զարնել. Հաստատականութեամբ զբաղիլ. Յարատևութեամբ շարունակել. Գոհութեամբ զաղբեցնել. Հանդարտարար վերսկսիլ. Քիչ մը դանդաղ աւարտել:

5. — Միշտ լաւ գործելու պայմաններն են.

Կարգաւորութիւն. Փոյր. Զոտարութիւն. Հանդարտարարչութիւն. Ամբողջացում գործի:

6. — Աղքատներու՝ Երկինք հասնելու ճանապարհը՝ Համբերութիւնն է. Հաւրուսներունը՝ Ողբարարութիւնը:

7. — Խաղաղութիւնն ամէն բարեք կը ապաստի. խռովութիւնն ո՛չ մէկ օգուտ:

8. — Եթէ դու քեզի չօգնես՝ ուրիշ:

